դաշէն տախտակամած ձեղուն , ներքնայարկ սենեակն լուսարարի , ընդարձակումն արտաքին դրան 'ի բարձր և 'ի լայն , նոր ջրամբարն 'ի կողմն հիւսիսոյ , ներքնայարկ սենեակն 'ի վերայ ձիթահանին կրկին դրամբք՝ մին յարտաքս եւ միւսն 'ի գաւիթն , և 'ի վերայ նորա երկու սենեակք ։

Մասն Երրորդ՝ արտաքոյ հրովարտակաց և Հէօճճէթից ։

Երկաթապատ երեսն արտաքին դրան , Հայկական արձանագրութիւնն 'ի վերայ նորա , կանթեղք կախեալք 'ի ձեղուանէ , մի պատկեր 'ի վերայ դրան գմբեթին , երկաթի ծորակաւ փոքրիկ լուացարանն , վերնայարկ սենեակն լուսարարի , քարեայ սանդուխտն երկաթի յենարանաւ , երկաթապատ երեսն արտաքին դրան սենեկի ձիթահանին ։

Փոխանորդն Հայոց ․ Շինութիւնք եւ նորոգութիւնք լերին Ձիթենեաց թէպէտեւ բաժանեցաւ յերիս մասունս , այլ Յոյնք 'ի պատասխանիս իւրեանց՝ յառաջոյ եւ զկնի՝ միշտ պնդեցին թէ շինուածքն հակառակ են հրովարտակի իւրեանց , և խնդրեցին զկործանումն նոցին ․ սակայն նոքա կանխագոյն են քան զթուական հրովարտակին , որպէս յայտնի եղեւ 'ի Հէօճճէթից ․ զի շինութիւնքն աւարտեալ են 'ի թուին ١٢٥٢ յամսեանն Շապանի , եւ հրովարտակ նոցին ելեալ է 'ի թուին ١٢٥٢ յամսեանն Զիլհիճճէի ․ ապա յայտնի երեւի թէ նոքա Ե ամսեայ ժամանակաւ յառաջ աւարտեալ են քան զթուական հրովարտակի նոցին , որոյ չեղեւ ընդդիմութիւն , եւ չիք ինչ յիշատակութիւն 'ի նմին սակս քակելոյ և աւերելոյ եղեալ շինուածոց , այլ քննութիւն տեղեաց որք կարօտ են նորոգութեանց ․ այսուհետեւ նոցա յանձն եղեալ է շինութիւնն ․ բառդ այսուհետեւ՝ ոչ նշանակէ անցեալ եւ զներկայ ժամանակս , այլ զապառնին , ուստի յանիրաւի եւ հակառակ հրովարտակի նոցին է թախանձումն Յունաց զկործանումն շինուածոց ։

Որպէս այժմ Յոյնք , նոյնպէս և յառաջագոյն Լատինք 'ի Դատարանի զնոյն պահանջեցին ․ այլ 'ի ծանուցանելն մեր 'ի Դուռն Տէրութեան , եկն հրամանագիր զի մնասցեն շինուածքն ․ ընթերցեալ մուծաւ յարձանագիրն եւ այն հրամանագիր ։